

չուժով ՂԱՐՍԱԷՐ, առաջին քաղաքը որուն մասին կ'ըսէ, «Հնդկաց ծով Էսկալէն» (տող 8-9), այսինքն կարմիր ծովուն նաւահանգիստն է:

Կարեւորութիւնը, զոր հին ատեն ստացած էր այս քաղաքը, կը պարտէր անոր որ Քօսէյր այն կէտն էր, ուր Նեղոս և Կարմիր ծով ամէնէն աւելի իրարու կը մօտենային: Հետեւաբար, ինչպէս Յովհաննէս Թիւթիւնճի՝ ուրիշ ճամբորդներ ալ Նեղոսը ձգելով հոնկէ չէպի ծով կը դիմէին: Այսպէս է, որ ստեղծուած էր առեւտրական այն բանուկ ճամբան, որուն շուրջը շինուած էին տասը քաղաքներ: Մօտը կը գտնուէի Վատի Համամատի հովիտը, որ համբաւաւոր է քարահանքերով, որոնցմէ հանուած քարերը կ'օգտագործուէին կառուցանելու համար Եգիպտոսի բազմաթիւ յիշատակարանները, ինչպէս բուրգերը:

18րդ հարստութեան շրջանէն՝ այս քաղաքը կը յիշուի իբր կարաւանային ճամբու մը մեկնակէտը, և անուշահոտութիւններու, ոսկիի, խունկի, քափուրի, փայտի, կաշիի՝ և թանկագին քարերու ներածման կայանը:

Մահմետական շրջանին՝ անիկա ուխտաւորներու իբր անցուղի ծառայած է:

Քօսէյր (Koseir) այսօր աննշան քաղաք մըն է, Ասիութ միւտի ինքիթի մէրքէզ Տայրուտի մէջ, հազիւ 1600 բնակչով (Պատեքրը, էջ 367): Ունի քսրափ մը՝ փայտէ նաւամատոյցով: Հոն կան երկու մզկիթ և բազմաթիւ վաճառատեղիներ, կառավարական պաշտօնատուն մը և հեռագրատուն մը (նոյն, էջ 368): Ահա ինչ որ կը մնայ այսօր անցեալ փառքէ մը, վասնզի, ինչպէս կը հաստատուի, պողոտէն փառաւոր շրջանին, ուր Եգիպտոս այնքան ծաղկեալ էր, անիկա երեւելի նաւահանգիստ մըն էր, որ Պողո-